ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

<< 02 >> հոկտեմբերի 2018թ. N 487-Լ

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ ԵՎ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՔԱՐԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳԱՆՁԱՐԱՆ» ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 7-րդ հոդվածը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 743-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրության 18-րդ կետի 7-րդ և 20-րդ ենթակետերով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության <<Թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի պետական գանձարան>> գործակալության կանոնադրությունը համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Ա.ԶԱՆԶՈՒՂԱԶՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի
«02» հոկտեմբերի 2018թ.
N 487-Լ հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ ԵՎ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՔԱՐԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳԱՆՁԱՐԱՆ» ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) «Թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի պետական գանձարան» գործակալությունը (այսուհետ՝ Գործակալություն)Նախարարության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է, որը կազմավորվել է Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 743-Լ որոշման համաձայն:

2. Գործակալությունն իր գործունեությունն իրականացնելիս ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, օրենքների, այլ իրավական ակտերի և իր կանոնադրության հիման վրա:

3. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը (այսուհետ՝ Նախարար) հաստատում է Գործակալության կանոնադրությունը, այդ թվում՝ կառուցվածքը, և կանոնադրության մեջ կատարում փոփոխություններ:

II. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

4. Գործակալության հիմնական խնդիրներն են՝

1) Հայաստանի Հանրապետության արտադրական, ֆինանսական, գիտական, մշակութային, ներդրումային ու այլ կարիքների բավարարման նպատակով թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի պետական պահուստների ձևավորման, համալրման, պահպանության, տեղաբաշխման ու ծախսման ապահովումը.

2) պետական սեփականություն հանդիսացող բոլոր թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի (ցանկացած տեսքով և վիճակում)՝ պետական պահուստներում միասնական հաշվառման ու հաշվեգրման ապահովումը.

3) թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի պետական պահուստներում առկա արժեքների հաշվառման և կառավարման, պահպանման, ցուցադրման գործառույթների իրականացումը:

III. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Գործակալության գործառույթներն են՝

1) պետական պահուստներում կուտակելու նպատակով ներքին և արտաքին շուկաներից թանկարժեք մետաղների, թանկարժեք քարերի ու դրանցից պատրաստված իրերի ձեռքբերումը, դրանց կուտակման գծով ծախսերի ֆինանսավորման ապահովումը և տվյալ տարում դրանց համար վճարումների իրականացումը՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված միջոցներին համապատասխան՝ ստացված արժեքների մուտքագրումը պետական պահուստներ.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն բռնագանձված, բռնագրավված, հօգուտ պետությանը տիրազուրկ ճանաչված, ռեկվիզիցիայի կարգով, ժառանգության իրավունքով, նվիրատվությամբ ու այլ հիմքերով պետությանն անցած թանկարժեք մետաղների, թանկարժեք քարերի և դրանցից պատրաստված իրերի, ինչպես նաև այդպիսի իրերի ջարդոնի՝ պետական պահուստներ մուտքագրման ապահովումը.

3) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով և չափով թանկարժեք մետաղների, թանկարժեք քարերի և դրանցից պատրաստված իրերի՝ պետական պահուստներից բացթողումը, բաց թողնված արժեքների դիմաց վճարումների գանձումը և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամտային մաս մուտքագրումը: Նախարարության միջոցով յուրաքանչյուր ֆինանսական տարվա ընթացքում թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի պետական պահուստների համալրման ու ծախսման մասին մինչև հաջորդ տարվա մարտի 15-ը Հայաստանի Հանրապետության կառավարություն հաշվետվության ներկայացումը.

4) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով՝ պետական սեփականություն հանդիսացող թանկարժեք մետաղների, թանկարժեք քարերի

և դրանցից պատրաստված իրերի պետական պահուստներում հաշվեգրման և միասնական հաշվառման ապահովումը, դրանց առկայության և շարժի ամփոփ հաշվառումը.

5) թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի պետական պահուստներում հաշվեգրված արժեքները տնօրինող, տիրապետող ու օգտագործող պետական հիմնարկներից իրենց կողմից օգտագործվող պետական պահուստների նյութական արժեքների առկայության, շարժի վերաբերյալ տեղեկատվության ստացումը.

6) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով՝ պետական սեփականություն հանդիսացող թանկարժեք մետաղների բացթողման, ինչպես նաև պետական պահուստները համալրելու նպատակով թանկարժեք մետաղների գնման գների հաստատումը.

7) Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն թանկարժեք մետաղների գների հրապարակումը և իրավասու պետական մարմիններ ներկայացումը, մետաղական օգտակար հանածոների ռոյալթիների հաշվարկման նպատակով խտանյութում պարունակվող մետաղների համար Լոնդոնի մետաղների բորսայի տվյալների հրապարակումը, գունագեղ քարերի գների հրապարակումը՝ օգտակար հանածոների արդյունահանված պաշարների համար բնօգտագործման վճարները հաշվարկելու նպատակով, ինչպես նաև մասնավորեցվող կամ սնանկացման գործընթացում գտնվող պետական կամ պետական բաժնեմաս ունեցող կազմակերպությունների գույքի կազմումը առկա թանկարժեք մետաղներն ու քարերը գնահատելու նպատակով.

8) օրենքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող՝ պետական հիմնարկների հաշվեկշռում գտնվող թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի միասնական հաշվառումը՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի պահուստներում գտնվող արժեքների.

9) պետական հիմնարկներից ու կազմակերպություններից գույքի վերանորոգումից, դուրսգրումից և օտարումից գոյացած ապամոնտաժված և առանձնացված թանկարժեք մետաղների ջարդոնի ու թափոնի ընդունումը, դրանց վերամշակման, զտման կազմակերպումը և արտադրված թանկարժեք մետաղների՝ Հայաստանի Հանրապետության պետական պահուստներում հաշվեգրումը.

10) վերամշակման, վերանորոգման և զտման (աֆինաժի) մասին կնքված պայմանագրերի համաձայն վերամշակող, վերանորոգող ու զտող կազմակերպություններ զտված և ոչ կոնդիցիոն թանկարժեք մետաղների, թանկարժեք մետաղներից ու թանկարժեք քարերից պատրաստված իրերի և նյութերի, թանկարժեք մետաղների ջարդոնի և թափոնի առաքումը.

11) օրենքով սահմանված կարգով բնակչությունից թանկարժեք մետաղների, ինչպես նաև դրանցից պատրաստված իրերի ջարդոնների, թանկարժեք մետաղների ու թանկարժեք քարերի հազվագյուտ բնակտորների, թանկարժեք մետաղներից և թանկարժեք քարերից պատրաստված բարձր գեղարվեստական և պատմամշակութային արժեք ներկայացնող իրերի գնումների կազմակերպումը և իրականացումը՝ դրանք մուտքագրելով պետական պահուստներում.

12) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով պետական պաշտոնատար անձանց կողմից պաշտոնի բերումով ստացված թանկարժեք նվերների՝ պետական պահուստներում մուտքագրումը և (կամ) հաշվառման ապահովումը.

13) իր կողմից ժամանակավորապես ի պահ ընդունված թանկարժեք մետաղների, թանկարժեք քարերի և դրանցից պատրաստված իրերի՝ տերերին վերադարձման ապահովումը՝ դատական մարմինների վճիռների համաձայն.

14) պետական պահուստներում մուտքագրված արժեքների ամենամյա գույքագրումը, հաշվառումը, այդ թվում՝ պետական պահուստներում հաշվեգրված և այլ սուբյեկտների հաշվեկշռում գտնվող արժեքների ամփոփ հաշվառումը.

15) պետական պահուստները համալրելու նպատակով ձեռք բերվող հազվագյուտ, պատմամշակութային և բարձր գեղարվեստական արժեք ունեցող թանկարժեք մետաղները, թանկարժեք քարերը և դրանցից պատրաստված իրերը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով փորձաքննության ենթարկելու և գնահատելու համար, գիտնականներից և համապատասխան կազմակերպությունների ու հիմնարկների մասնագետներից և ղեկավարներից կազմված խորհրդատվական ու փորձագիտական խորհուրդների և հանձնաժողովների ստեղծումը.

16) պետական պահուստներում գտնվող թանկարժեք մետաղներից ու թանկարժեք քարերից պատրաստված մշակութային և բարձր գեղարվեստական արժեք ունեցող իրերի ցուցադրության կազմակերպումը, Հայաստանի Հանրապետությունում և այլ երկրներում կազմակերպվող ոսկերչական իրերի ցուցահանդես-վաճառքներին մասնակցությունը.

17) պետական պահուստներն արդյունավետ կառավարելու նպատակով, թանկարժեք մետաղների ներքին ու արտաքին շուկաների իրավիճակի ուսումնասիրումը.

18) թանկարժեք քարերի դասակարգման, տեսակավորման, մշակման, փորձաքննության ու գնահատման համաշխարհային և հայրենական առաջավոր փորձի ուսումնասիրումը ու ներդրումը.

19) տարբերանիշերի և անվանանիշերի պատվիրումը, տրամադրումը և հաշվառումը.

20) «Թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի պետական գանձարան» գործակալություն մուտքագրվող թանկարժեք մետաղների, թանկարժեք քարերի և դրանցից պատրաստված իրերի փորձաքննությունը, որակական գնահատման ապահովումը և թանկարժեք մետաղների ստուգիչ տարրալուծումների կատարումը, ինչպես նաև թանկարժեք քարերի անվանման որոշումը և որակական գնահատման ապահովումը.

21) գանձարան մուտքագրվող և ելքագրվող թանկարժեք մետաղների, թանկարժեք քարերի և դրանցից պատրաստված իրերի շուկայական գնահատումը.

22) թանկարժեք մետաղներ և թանկարժեք քարեր պարունակող թանգարանային նմուշների ու արխիվային արժեքների փորձաքննության կատարումը.

23) պետական մարմինների և դատարանների կողմից ընդունված որոշումների հիման վրա կատարվող թանկարժեք մետաղների, թանկարժեք քարերի ու դրանցից պատրաստված իրերի փորձաքննությունը.

24) հարգորոշման և հարգադրոշմման համար օգտագործվող սարքավորումների փորձաքննությունը.

25) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Գործակալությանն վերապահված այլ խնդիրների և գործառույթների իրականացում:

26) Նախարարության կանոնադրությամբ հաստատված գործառույթների իրականացումը.

27) Նախարարի և Նախարարության գլխավոր քարտուղարի (այսուհետ՝ Գլխավոր քարտուղար) այլ հանձնարարականների կատարումը:

IV. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

6. Գործակալությունը ղեկավարում է Գործակալության պետը, նրա բացակայության դեպքում՝ բաժինների պետերից մեկը՝ Գործակալության պետի հանձնարարությամբ:

7. Գործակալության պետը անմիջական հաշվետու է Նախարարին:

8. Գործակալության գործունեության համակարգումը Նախարարի հրամանով կարող է վերապահվել Նախարարի տեղակալներից մեկին:

9. Գործակալության պետին հանձնարարականներ և ցուցումներ տալիս է Նախարարը: Նախարարի հանձնարարությամբ հանձնարարականները կարող են փոխանցել իրենց համակարգման լիազորությունների շրջանակներում Նախարարի տեղակալը, Գլխավոր քարտուղարը:

10. Գործակալության գործառույթների իրականացմամբ ստեղծված փաստաթղթերն ստորագրում է Գործակալության պետը:

11. Գործակալության բաժինների աշխատանքը ղեկավարում և կազմակերպում են բաժինների պետերը:

V. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

12. Գործակալության կառուցվածքում ընդգրկվում են հետևյալ բաժինները՝

1) Թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի պետական պահուստների հաշվառման և կառավարման բաժին,

2) Թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի փորձագիտական և ապրանքագիտական բաժին:

13. Գործակալության յուրաքանչյուր քաղաքացիական ծառայողի գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները, շփումներն ու հաշվետվողականությունը նկարագրվում և այդ գործառույթները արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքները ու կոմպետենցիաները և կառավարման համակարգում տեղակայվածությունը սահմանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրով (աշխատատեղի նկարագրով):